ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶՊԵՏ
ԿԱՐԳԱԴՐՈՒԹՅՈՒՆ

N 341 – Ա

09 սեպտեմբերի 2019 թ.

ՀԱՅԿ ՂԱՓԱՆՑՅԱՆԻՆ «ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ Լ. ՔԱԼԱՆԹԱՐԻ ԱՆՎԱՆ ԴՐԱՄԱՏԻԿԱԿԱՆ ԹԱՏՐՈՆ» ՊԵՏԱԿԱՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ՏՆՕՐԵՆԻ ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ ՆՇԱՆԱԿԵԼՈՒ ԵՎ ԺԱՄԱՆԱԿԱՎՈՐ ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ ԿՆՔԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության աշխատանքային օրենսգրքի 5-րդ հոդվածի 1-ին և 3-րդ մասերի, 95-րդ հոդվածի 2-րդ մասի, «Կառավարչական իրավահարաբերությունների կարգավորման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածի 1-ին մասի ու 19-րդ հոդվածի դրույթներով և հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի հունվարի 25-ի N 224-Ն որոշմամբ հաստատված N 1 հավելվածի 11.2-րդ կետը և Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզպետի 2006 թվականի փետրվարի 1-ի N 15-Ն որոշմամբ հաստատված N 1 հավելվածի 5.3-րդ կետը

կարգադրում եմ՝

1. 2019 թվականի սեպտեմբերի 9-ից, մինչև հաստատված կարգի պահանջներով մրցույթի արդյունքներով պաշտոնի նշանակումը «Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզի Լ. Քալանթարի անվան դրամատիկական թատրոն» պետական ոչ առևտրային կազմակերպության տնօրենի պաշտոնակատար նշանակել Հայկ Ղափանցյանին՝ կնքելով ժամանակավոր աշխատանքային պայմանագիր:

09.09.2019

ՄԱՐԶՊԵՏ՝ Գ. ՍԱՆՈՍՅԱՆ

SANOSYAN GNEL 1710830069

Գ. ՍԱՆՈՍՅԱՆ
ք.Գավառ